



Կարգապահական գործ թիվ ԿԳ-16225

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի օգոստոսի 18-ի թիվ 126-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/73-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԱՄԱԶԴ ԿԻՎԻՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյանի, խորհրդի անդամներ՝ Նելլի Հարությունյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Հրանտ Անանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,
քննության առնելով փաստաբան Արամազդ Կիվիրյանին (արտոնագիր թիվ 800) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Աշլի Վանիկ Մինասի (**այսուհետ՝ Դիմող**) ներկայացուցիչ, փաստաբան Սեդա Սաֆարյանը՝ դիմելով Պալատ հայտնել է, որ փաստաբան Արամազդ Կիվիրյանը թիվ ԵԱՆԴ/2548/02/08 քաղաքացիական գործով հանդիսացել է Դիմողի ներկայացուցիչը:

Դիմողի ներկայացուցիչը նշել է նաև, որ թիվ ԵԱՆԴ/1890/02/13 քաղաքացիական գործով Արմինե Պողոսյանի շահերը դատարանում ներկայացնում է փաստաբան Արամազդ Կիվիրյանը, իսկ այդ գործով քննության է առնվել քաղաքացիական գործն ըստ հայցի Արմինե Պողոսյանի ընդդեմ Աշլի Վանիկ Մինասի, Սիրուն Իսուկեն Մինասի՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը 1/2 բաժնի չափով ճանաչելու, գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու՝ ստացված գումարը հետագայում բաշխելով համասեփականատերերի միջև՝ յուրաքանչյուրին 1/2 բաժնի չափով, գույքի նկատմամբ սեփականության իրավունքը 1/2 բաժնի չափով հաստատելու՝ դրանք օտարելու հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջների մասին:

Դիմողի ներկայացուցիչը նշել է, որ թիվ ԵԱՆԴ/2548/02/08 և թիվ ԵԱՆԴ/1890/02/13 քաղաքացիական գործերով վեճի առարկա է հանդիսացել «Մինասյան Բժշկական Կենտրոն» ՍՊ ընկերության շարժական և անշարժ գույքերը:

12.12.2016թ. դիմումով դիմողի ներկայացուցիչը խնդրել է դիմումն ընդունել Աշլի Մինասի կողմից և ներկայացրել է դատական ակտեր, ինչպես նաև 26.08.2016թ.

նոտարական կարգով վավերացված լիազորագրի պատճենը:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 22.12.2016թ. թիվ 503-Ա/ԿԳ-16225 որոշմամբ փաստաբան Արամազդ Կիվիրյանի (արտոնագիր թիվ 800) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենքի**) 20-րդ հոդվածի երկրորդ մասի 4-րդ կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագրքի**) 3.2.5 և 3.2.8 ենթակետերի խախտման հատկանիշներով:

13.02.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Նվեր Սարգսյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմողի ներկայացուցիչը, պատասխանելով նախապատրաստողի հարցերին, հայտնել է, որ Պալատ 2016թ. դիմելու պատճառը պայմանավորված է նրանով, որ Աշլի Մինասը 2016 թվականին է իրեն տվել նման լիազորություն և նրա հետ այդ ժամանակ է մանրամասն քննարկվել, թե ինչ է արվել նախկին քաղաքացիական գործի շրջանակներում Ա. Կիվիրյանի կողմից, և որ փաստն է նա օգտագործել Արմինե Պողոսյանի գործով 2013թ.: Դիմողի ներկայացուցիչը հայտնել է, որ թիվ ԵԱՆԴ/2548/02/08 քաղաքացիական գործով և թիվ ԵԱՆԴ/1890/02/13 քաղաքացիական գործով վեճի առարկան ամբողջությամբ նույնն է՝ Երևան քաղաքի Մուրովական փողոց 43 հասցեի բազմահարկ շինությունը:

Դիմողի ներկայացուցիչը 31.05.2017թ., 08.06.2017թ., 12.06.2017թ., 20.07.2017թ. և 08.06.2017թ. ներկայացված առարկություններով և միջնորդություններով հայտնել է, որ իր վստահորդը հայտնել է, որ նման պայմանագիր չի կնքվել իր և Արամազդ Կիվիրյանի միջև և պայմանագրում նշված 50.000 ՀՀ դրամ գումար իր կողմից չի վճարվել: Նշված պայմանագրի կնքման անհրաժեշտությունը չի եղել, քանի որ պայմանագրում նշված քաղաքացիական գործը, որով պետք է մատուցվեր իրավաբանական ծառայություն, դեռևս 2011թ. մայիս ամսին ամբողջությամբ ավարտված է եղել և գործը հանձնված է եղել գրասենյակ:

Դիմողի ներկայացուցիչը նշել է, որ թիվ ԵԱՆԴ/1890/02/13 քաղաքացիական գործի քննության ընթացքում իր կողմից ներկայացվել է միջնորդություն Արամազդ Կիվիրյանին վարույթից հեռացնելու մասին՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նախկինում ներկայացրել է Աշլի Մինասի շահերը, իսկ այժմ ներկայացնում է Արմինե Պողոսյանի շահերն ընդդեմ Աշլի Մինասի (շահերի հակասություն): Արամազդ Կիվիրյանն, առարկելով միջնորդության դեմ, որևէ ապացույց չի ներկայացրել առ այն, որ ինքն ունեցել է Աշլի Մինասի համաձայնությունը, չի ներակայացրել սույն կարգապահական գործով ներկայացված պայմանագիրը: Ուստի, իր վստահորդը պնդում է, որ նման պայմանագիր առկա չէ, և այդ է պատճառը, որ Արամազդ Կիվիրյանը խուսափում է ներկայացնել պայմանագրի բնօրինակը: Նշված պայմանագրի բնօրինակը չ'ներկայացվելու դեպքում, խնդրել է «ԱՐԵՍ» փաստաբանական գրասենյակ ՍՊ

ընկերության և Աշլի Վանիկ Մինասի միջև 08.11.2011թ. կնքված Իրավաբանական Ծառայությունների Մատուցման N 02 պայմանագրի (**այսուհետև նաև՝ Պայմանագիր**) նոտարական կարգով վավերացված պատճեն չդիտարկել որպես թույլատրելի ապացույց: Միջնորդել է Պատասխանողից պահանջել նշված պայմանագրի բնօրինակը և նշանակել փորձաքննություն:¹

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

Փաստաբան Արամազդ Կիվիրյանը 13.12.2016թ. ներկայացրել է գրավոր փաստարկներ և datalex.am կայքից տպված, գործին առնչվող երկու նյութ:

Փաստաբան Արամազդ Կիվիրյանը գտել է, որ Սեդա Սաֆարյանի կողմից ներկայացված դիմումն անհիմն է: Չանդրադառնալով դիմումի բովանդակության մեջ նշված փաստական տվյալներին՝ Արամազդ Կիվիրյանը նշել է, որ Աշլի Մինասի շահերը ներկայացրել է 2011 թվականին, իսկ Արմինե Պողոսյանի շահերը՝ 2013 թվականին: Արամազդ Կիվիրյանը գտել է, որ այս պայմաններում անցել է վաղեմության ժամկետը:

27.02.2017թ. Պատասխանողը ներկայացրել է դիմում, որով հայտնել է, որ իր կողմից դատական կարգով բողոքարկվել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 22.12.2016թ. թիվ 503-Ա/ԿԳ-16225 որոշումը և խնդրել է կասեցնել կարգապահական վարույթը:²

25.05.2017թ. Պատասխանողը ներկայացրել է առարկություններ, որտեղ հայտնել է, որ Կանոնագրի 3.2.8 կետով նախատեսված խախտման համար պարտադիր է նախորդ վստահորդի կողմից վտահված գաղտնիքի բացահայտման վտանգի առկայություն, կամ եթե այն տեղեկատվությունը, որին տիրապետում է փաստաբանը նախորդ վստահորդի վերաբերյալ, կարող է անբարեխիղճ արտոնություն ստեղծել նոր վստահորդի, համար, իսկ թիվ ԵԱՆԴ/2548/02/08 քաղաքացիական գործով կայացվել է վճիռ, որը հրապարակված է և վճռի մասին տեղեկացվածությունը և այն տիրապետելու հասանելիությունը հանրամատչելի է բոլորին, տեղադրված է www.datalex.am կայքում և ամենակարևորը չի հանդիսանում փաստաբանական գաղտնիք: Հայտնել է նաև, որ ԵԱՆԴ/1890/02/13 քաղաքացիական գործի փաստական կազմում դրվել է բացառապես հրապարակված, բոլորի համար հանրամատչելի ու հասանելի թիվ ԵԱՆԴ/2548/02/08 դատական ակտը: Կից ներկայացրել է Պայմանագրի պատճենը, իսկ 08.06.2017թ. ներկայացրել է պայմանագրի նոտարական կարգով վավերացված պատճենը:

3.3. Վկաների ցուցումները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

27.02.2017թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Նվեր Սարգսյանը կազմել է եզրակացություն: 22.03.2017թ. Պատասխանողը ներկայացրել է առարկություններ եզրակացության վերաբերյալ, որտեղ մասնավորապես նշել է, որ

¹ Խորհուրդը Պատասխանողից պահանջել է խորհրդին ներկայացնել Պայմանագրի բնօրինակը, սակայն վերջինս չի ներկայացրել:

² Խորհուրդը 08.06.2017թ. թիվ ԿԳ/59-Ա որոշմամբ մերժել է Պալատի նախագահի 22.12.2017թ. թիվ 503-Ա/ԿԳ-16225 որոշման հիման վրա հարուցված թիվ ԿԳ-16225 կարգապահական վարույթը կասեցնելու մասին դիմումը: Որոշումն ուղարկվել է կողմերին:

Դիմողի կողմից բաց է թողնվել կարգապահական պատասխանատվության ենթադրյալ հիմքը հայտնաբերելուց հետո պալատին դիմելու վեցամսյա ժամկետը, բաց է թողնվել նաև կարգապահական վարույթ հարուցելու մեկամսյա ժամկետը: Նշել է նաև, որ նախապատրաստող անձը չի անդրադարձել իր կողմից ներկայացրած վարույթը կասեցնելու մասին դիմումին: Ըստ Պատասխանողի նախապատրաստողը պարտավոր էր, հստակ սահմանել և կողմերի առջև բացահայտել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը, յուրաքանչյուր կողմի առջև բացահայտելով վերջինիս կողմից ապացուցման ենթակա փաստերի շրջանակը, սահմանները, ապացույց ներկայացնելու ժամկետները, իրապես հնարավորություն ընձեռելով կողմերին լիարժեք իրացնելու իրենց իրավունքները, ինչը չի արել Պատասխանողը նշել է նաև, որ Նախապատրաստողը դուրս է եկել Դիմողի կողմից դիմումով բարձրացված հարցի շրջանակներից և եզրակացությամբ որպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստեր և դրանք հաստատող ապացույցներ գլխում, ներկայացրել է այնպիսի փաստական տվյալներ, որոնք նախ որևէ առնչություն չունեն կարգապահական գործով քննության ենթակա հարցերի հետ, միաժամանակ, չեն պարունակում նաև որևէ հղում այն ապացույցներին, որոնք հաստատում են Նախապատրաստողի կողմից կատարված եզրահանգումները:

01.03.2017թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստերը նշանակվել են 20.04.2017թ., ժամը՝ 18:30-ին, 25.05.2017թ., ժամը՝ 19:30-ին, 08.06.2017թ. ժամը՝ 19:30-ին, 22.06.2017թ. ժամը՝ 19:00-ին, 20.07.2017թ. ժամը՝ 19:00-ին, 18.08.2017թ. ժամը՝ 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (այսուհետ՝ **Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- 1) **Աշլի Վանիկ Մինասը հանդիսանում է փաստաբան Արամազդ Կիվիրյանի նախկին վստահորդը (թիվ ԵԱՆԴ/2548/02/08 քաղաքացիական գործով):**
Աշլի Վանիկ Մինասը 08.09.2008 թվականին հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Ֆլորա Մինասի, երրորդ անձ՝ Աննա Ղազարյանի, «Մինասյան Բժշկական Կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Մինասյան» առողջապահական բարեգործական հիմնադրամի՝ ամուսնության ընթացքում ձեռք բերված «Մինասյան Բժշկական Կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության շարժական և անշարժ գույքի 1/2 բաժնեմասի նկատմամբ Աշլի Վանիկ Մինասի սեփականության իրավունքը ճանաչելու, շարժական և անշարժ գույքի 1/2 բաժնեմասն առանձնացնելու, 1/2

մասով «Մինասյան Բժշկական Կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և Աննա Ղազարյանի միջև 07.05.2008 թվականին կնքված անշարժ գույքի հիփոթեքի պայմանագիրը և դրա հիման վրա ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից կատարված իրավունքի պետական գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին: Նշված գործով կնքվել է հաշտության համաձայնություն, որը հաստատվել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 25.03.2011թվականի վճռով:

Նշված փաստը հաստատվում է www.datalex.am դատական տեղեկատվական համակարգի ինտերնետային կայքի տեղեկատվությամբ, Կողմերի բացատրությամբ:

2) Փաստաբան Արամազդ Կիվիրյանը իրավաբանական օգնություն է տրամադրել Աշի Վանիկ Մինասի հակառակորդ կողմը հանդիսացող Արմինե Պողոսյանին (թիվ ԵԱՆԴ/1890/02/13 քաղաքացիական գործով), ինչպես առաջին ատյանի, այնպես էլ՝ վերաքննիչ դատարաններում:

Արմինե Պողոսյանը (ներկայացուցիչ Արամազդ Կիվիրյան) 14.11.2013 թվականին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Աշի Վանիկ Մինասի՝ համատեղ սեփականություն հանդիսացող գույքի նկատմամբ 1/2 բաժնի չափով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով:

Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան 09.10.2014թ. դատարանի վճռից պարզ է դառնում, որ Արմինե Պողոսյանի ներկայացուցիչն է հանդիսանում Արամազդ Կիվիրյանը. 28.10.2014թ. Արմինե Պողոսյանի ներկայացուցիչ Արամազդ Կիվիրյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 09.10.2014 թվականի վճռի դեմ.

09.03.2015թ. Արմինե Պողոսյանի ներկայացուցիչ Արամազդ Կիվիրյանը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.02.2015 թվականի որոշման դեմ բերել է վճռաբեկ բողոք.

Արամազդ Կիվիրյանը Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում 05.02.2016թ. նշանակված դատական նիստին մասնակցել է որպես Արմինե Պողոսյանի ներկայացուցիչ.

Արամազդ Կիվիրյանը որպես Արմինե Պողոսյանի ներկայացուցիչ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում մասնակցել է 01.09.2016թ. նշանակված նիստին.

Արամազդ Կիվիրյանը որպես Արմինե Պողոսյանի ներկայացուցիչ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում մասնակցել է 30.06.2016թ.

նշանակված նիստին.

Արամազդ Կիվիրյանը որպես Արմինե Պողոսյանի ներկայացուցիչ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում մասնակցել է 11.08.2016թ. նշանակված նիստին.

Արամազդ Կիվիրյանը որպես Արմինե Պողոսյանի ներկայացուցիչ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում մասնակցել է 01.09.2016թ. դատական նիստին:

Նշված փաստերը հաստատվում են www.datalex.am դատական տեղեկատվական համակարգի ինտերնետային կայքի տեղեկատվությամբ, դատական նիստերի ձայնագրառման կրիչով, Դիմողի բացատրությամբ:

3) Թիվ ԵԱՆԴ/2548/02/08 և թիվ ԵԱՆԴ/1890/02/13 գործերով վեճի առարկան համընկնում է և այդ գործերի փաստերը փոխկապակցված են:

Ըստ թիվ ԵԱՆԴ/2548/02/08 գործի տվյալների՝ Աշլի Մինասը ձեռք է բերել Երևան քաղաքի Մուղովական 43/4 հասցեում գտնվող անշարժ գույքը «Մինասյան բժշկական կենտրոն» ՍՊ ընկերությունից՝ հաշտության համաձայնության հիմքով:

Ըստ թիվ ԵԱՆԴ/1890/02/13 գործի տվյալների՝ կողմերն ամուսնացել են 2008 թվականին: Համատեղ կյանքի ընթացքում, ի թիվս այլ գույքերի, հայցվորը և պատասխանողը ձեռք են բերել Երևան քաղաքի Մուղովական 43/4 հասցեում գտնվող անշարժ գույքը, հետևաբար որպես համատեղ սեփականության առարկա, Արմինե Պողոսյանը գույքային պահանջ է ներկայացրել Աշլի Մինասի դեմ:

Նշված փաստը հաստատվում է www.datalex.am դատական տեղեկատվական համակարգի ինտերնետային կայքի տեղեկատվությամբ, կողմի բացատրությամբ:

4) Դիմող կողմը ժխտել է Պայմանագիրն Աշլի Մինասի կողմից ստորագրված լինելու փաստը:

Նշված փաստը հաստատվում է դիմողի 31.05.2017թ., 12.06.2017թ., 20.07.2017թ. գրություններով:

5) Պալատի խորհրդի որոշմամբ Պայմանագրի բնօրինակը պահանջվել է փաստաբան Արամազդ Կիվիրյանից, որը, սակայն, փաստաբան Արամազդ Կիվիրյանը չի ներկայացրել:

Նշված փաստը հաստատվում է Խորհրդի կողմից 09.06.2017թ. և 21.07.2017թ. Պատասխանողին ուղղված գրությամբ:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 08.06.2017թ. տրամադրված ՈԸԴՂ/ԿԳ/329-17 տեղեկանքի համաձայն Արամազդ Կիվիրյանն արտոնագիրը ստացել է 14.10.2008թ.: Արամազդ Կիվիրյանի նկատմամբ 2008-2017թթ ժամանակահատվածում բացի սույն կարգապահական վարույթից ևս 3 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որոնցից մեկով փաստաբան Արամազդ Կիվիրյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ խիստ նկատողության ձևով

(որոշումը բողոքարկվել է դատական կարգով), իսկ մյուս երկու կարգապահական վարույթները գտնվում են ընթացիկ փուլում:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արամազդ Կիվիրյանն ենթակա է կարգապահական պատասխանատվության Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, Կանոնագրքի 3.2.5 և 3.2.8 ենթակետերի խախտման համար հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ Փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու այն դեպքում, երբ՝ պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը:

Կանոնագրքի 3.2.5 ենթակետի համաձայն՝ Փաստաբանն իրավունք չունի ընդունել հանձնարարությունը, նաև Օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Կանոնագրքի 3.2.8 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պետք է հրաժարվի նոր վստահորդի օգտին գործել, եթե առկա է նախորդ վստահորդի կողմից վստահված գաղտնիքի բացահայտման վրանգ, կամ եթե այն տեղեկատվությունը, որին տիրապետում է փաստաբանը նախորդ վստահորդի վերաբերյալ, կարող է անբարեխիղճ արդյունություն ստեղծել նոր վստահորդի համար:

Վերլուծելով վերը նշված կանոնների պահանջները, Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արամազդ Կիվիրյանի վարքագիծը գնահատելու համար, անհրաժեշտ է ստանալ հետևյալ իրավական հարցադրումների պատասխանները.

ա. Արդյո՞ք անցել է կարգապահական վարույթ հարուցելու վաղեմության ժամկետը.

Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, Կանոնագրքի 3.2.5 և 3.2.8 ենթակետերն արգելում են փաստաբանին իրավաբանական օգնություն ցույց տալ որոշակի իրավիճակում:

Ներկայացուցչության ձևով իրավաբանական օգնություն ցույց տալը հանդիսանում է շարունակական գործընթաց, քանի որ փաստաբանը մասնակցում է մի շարք դատավարական փուլերի: Օրինակ, մասնակցում է նախնական դատական նիստերին, դատաքննությանը, բողոքարկում է դատական ակտը, մասնակցում է վերաքննիչ դատարանի դատական նիստերին: Հատկանշական է այն, որ դատավարական որևէ փուլի ժամանակ, եթե պարզենք, թե ինչ վարքագիծ է դրսևորում այդ պահին փաստաբանը, ապա կստացվի, որ փաստաբանը իրավաբանական օգնություն է տրամադրում վստահորդին: Հետևաբար, անկախ նրանից, թե երբ է սկսվել իրավաբանական օգնության տրամադրման նախաձեռնությունը, միևնույն է փաստացի իրավաբանական օգնություն տրամադրելու գործողությունը նույնպես հանդիսանում է իրավաբանական օգնության դրսևորում:

Հետևաբար, եթե օրենսդիրը սահմանում է, որ փաստաբանն «իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալ», ապա այդ արգելքի ներքո փաստաբանի, որպես

իրավաբանական օգնություն իրականացրած փաստացի գործողությունն արդեն հակասող վարքագիծ է հանդիսանում:

Հատկանշական է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/2598/02/11 քաղաքացիական գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ իրավաբանական օգնության իրավահարաբերությունը ծագում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում նշված գործողություններից մեկը կատարելու պահից, ներառյալ, երբ փաստաբանն օգտվում է իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով կամ այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներից, կատարում իր պարտականությունները: Ընդ որում, կախված փաստաբանի և վստահորդի միջև առաջացած իրավահարաբերության բնույթից, իրավաբանական օգնությունը կարող է մի դեպքում սահմանափակվել օրենքում նշված գործողություններից մեկով կամ ներառել դրանցում նշված տարբեր գործողություններ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում իրավաբանական օգնության բնույթը և շրջանակները պարզելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել փաստաբանի և վստահորդի միջև ծագած իրավահարաբերության քաղաքացիական իրավական հիմքին, քանի որ փաստաբանի կողմից անձին իրավաբանական օգնություն ցուցաբերվում է համապատասխան պայմանագրի կամ այլ իրավաբանական փաստի հիման վրա: Ընդ որում, նշված դեպքերում նախատեսվում են իրավաբանական օգնության ձևերը և շրջանակները, որոնք փաստաբանը պետք է ցույց տա կոնկրետ անձին: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ փաստաբանի կողմից անձին իրավաբանական օգնություն ցույց տալու բնույթը, դրանում ներառվող գործողությունների շրջանակները և իրավաբանական օգնության ժամանակահատվածը կարող է պարզվել կողմերի միջև իրավահարաբերության առաջացման հիմք համարվող իրավաբանական փաստերի կամ կատարված փաստացի գործողությունների ուսումնասիրության արդյունքում (պայմանագիր, լիազորագիր և այլն):

Նշված վաղեմության ժամկետի հաշվարկի հարցը պարզելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելու և կարգապահական պատասխանատվության հիմքը ծագելու օրենսդրական եզրույթների մեկնաբանությանը:

Կարգապահական պատասխանատվության հիմք

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հասկացությունների մեկնաբանության համար պետք է հիմք ընդունվեն վերոնշյալ վերլուծությունները, ինչպես նաև ներկայումս գործող «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.1-ին հոդվածի 4-րդ կետը, որի համաձայն՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնադրով նախատեսված պահանջների խախտման հարկանիշների առերևույթ առկայությունը: Հետևաբար կարգապահական պատասխանատվության հիմքը սույն դեպքում դրսևորվում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված արգելքի խախտմամբ: Այսինքն՝ օրենսդիրը նշված դեպքում իրավաբանական օգնության ցուցաբերումը համարում է իրավախախտում, ինչն էլ իր հերթին փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք հասկացությունը դրսևորվում է «Փաստաբանության

մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված դեպքերում իրավաբանական օգնություն ցույց տալով:

Կարգապահական պատրասխանավորության հիմքի ծագում

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կարգապահական պատրասխանավորության հիմքը իրավաբանական օգնության ցուցաբերումն է, այսինքն՝ փաստաբանի կողմից «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում նշված գործողություններից մեկը կատարելը, ներառյալ, երբ փաստաբանն օգտվում է իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով կամ այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներից, կատարում իր պարտականությունները: Այդ գործողությունները սույն դեպքում դիտարկվում են որպես իրավախախտում, իսկ կարգապահական պատրասխանավորության հիմքը ծագում է այդ իրավախախտումը կատարելու պահից: Այն դեպքում, երբ վստահորդի և փաստաբանի միջև իրավաբանական օգնության իրավահարաբերության բնույթից ելնելով այդ իրավախախտումը դրսևորվում է իրավաբանական օգնության մեջ ներառվող տարբեր գործողություններ կատարելով, այդ գործողությունները նույնպես դիտարկվում են որպես իրավախախտում, հետևաբար դրանցից յուրաքանչյուրի կատարման ժամանակ ծագում է կարգապահական պատրասխանավորության ենթարկելու հիմքը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ վերլուծությունները և օրենքի նման մեկնաբանությունը բխում են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում սահմանված օրինապահության սկզբունքից, քանի որ հակառակ պարագայում, եթե որպես կարգապահական պատրասխանավորության հիմքի ծագման պահ գնահատվի վստահորդի կողմից փաստաբանին լիազորագիր տալու պահը, կամ իրավաբանական օգնություն ցուցաբերելու սկիզբը, ապա նման մեկնաբանության դեպքում իրավախախտումը կարող է շարունակվել, սակայն կարգապահական պատրասխանավորության ենթարկելու վաղեմությունն անցած լինելու հիմքով փաստաբանը ոչ միայն չի կարող կարգապահական պատրասխանավորության ենթարկվել, այլև կարող է շարունակել տվյալ իրավախախտումը: Բացի այդ, Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի նման մեկնաբանությունը բխում է Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներից:»:

Խորհուրդը գտնում է, որ Օրենքով և Կանոնագրքով նախատեսված սահմանափակումն ուղղված է շահերի բախման դեպքում իրավաբանական օգնության արգելքին, ինչն իր հերթին կոչված է երաշխավորելու փաստաբանի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ լիակատար անկախությունը՝ այդ թվում տարբեր շահերից, որոնք կարող են ազդել վերջինիս կողմից անձին իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ անկախ և բարեխիղճ լինելու վրա՝ ապահովելով վստահորդի շահերի արդյունավետ պաշտպանությունը, ինչպես նաև չվնասելով նախկին վստահորդին:

Խորհուրդն արձանագրում է, որ փաստաբան Արամազդ Կիվիրյանի՝ թիվ ԵԱՆԴ/1890/02/13 քաղաքացիական գործով Արմինե Պողոսյանին իրավաբանական օգնություն ցույց տալու վարքագիծը սկսվել է 2013 թվականին, սակայն չի ավարտվել: Մասնավորապես,

Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան 09.10.2014թ. դատարանի վճռից պարզ է դառնում, որ Արմինե Պողոսյանի ներկայացուցիչն է հանդիսանում Արամազդ Կիվիրյանը,

28.10.2014թ. Արմինե Պողոսյանի ներկայացուցիչ Արամազդ Կիվիրյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 09.10.2014 թվականի վճռի դեմ

09.03.2015թ. Արմինե Պողոսյանի ներկայացուցիչ Արամազդ Կիվիրյանը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.02.2015 թվականի որոշման դեմ բերել է վճռաբեկ բողոք.

Արամազդ Կիվիրյանը Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում 05.02.2016թ. նշանակված դատական նիստին մասնակցել է որպես Արմինե Պողոսյանի ներկայացուցիչ.

Արամազդ Կիվիրյանը որպես Արմինե Պողոսյանի ներկայացուցիչ մասնակցել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում 01.09.2016թ. նշանակված նիստին.

Արամազդ Կիվիրյանը որպես Արմինե Պողոսյանի ներկայացուցիչ մասնակցել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում 30.06.2016թ. նշանակված դատական նիստին.

Արամազդ Կիվիրյանը որպես Արմինե Պողոսյանի ներկայացուցիչ մասնակցել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում 11.08.2016թ. նշանակված դատական նիստին.

Արամազդ Կիվիրյանը որպես Արմինե Պողոսյանի ներկայացուցիչ մասնակցել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում 01.09.2016թ. նշանակված դատական նիստին:

Հետևաբար, վերոնշյալ դատական նիստերին մասնակցելով՝ Անուշ Պողոսյանի օգտին գործելով ընդդեմ Աշլի Վանիկ Մինասի, փաստաբան Արամազդ Կիվիրյանը խախտել է վերոհիշյալ կանոնները:

բ. Արդյո՞ք սույն կարգապահական վարույթի և Արամազդ Կիվիրյանի նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-17006 ու ԿԳ-17021 վարույթների հարուցման հիմքը միևնույն արարքն է.

Խորհուրդը արձանագրում է, որ այն դեպքում, երբ վստահորդի և փաստաբանի միջև իրավաբանական օգնության իրավահարաբերության բնույթից ելնելով այդ իրավախախտումը դրսևորվում է իրավաբանական օգնության մեջ ներառվող տարբեր գործողություններ կատարելով, այդ գործողությունները նույնպես դիտարկվում են որպես իրավախախտում, հետևաբար դրանցից յուրաքանչյուրի կատարման ժամանակ ծագում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Կարգապահական յուրաքանչյուր վարույթի հիմքում հիմնականում դրված է երկու արարք՝

1. փաստաբանը իրավաբանական օգնություն է ցույց տվել Աշլի Մինասին.
2. փաստաբանն այժմ իրավաբանական օգնություն է ցույց տալիս Արմինե Պողոսյանին կոնկրետ գործով:

Բոլոր վարույթներում Աշլի Մինասին իրավաբանական օգնություն ցույց տալու գործը (վերոհիշյալ 1-ին կետի պայմանը), հետևաբար և նրա նախկին վստահորդի կարգավիճակի փաստումը, նույնն է:

Կարգապահական գործերը միմյանցից տարբերվում են փաստաբան Արամազդ Կիվիրյանի թույլ տված արգելված արարքների բնույթով: Այն է, այս կարգապահական գործով, Արամազդ Կիվիրյանն արգելված իրավաբանական օգնություն է ցույց տվել ԵԿԴ/2598/02/11 քաղաքացիական գործով:

գ. Արդյո՞ք սույն գործով առկա վստահորդի շահերը հակասում են նախորդ վստահորդի շահերին:

Խորհուրդն արձանագրում է Աշլի Մինասի և Արմինե Պողոսյանի մասնակցությամբ ԵԱՆԴ/1890/02/13 գործով կողմերը հանդիսանում են դատավարական հակառակորդներ՝ հայցվոր-պատասխանող: Այս գործով Աշլի Մինասի և Արմինե Պողոսյանի շահերի միջև կա հակասություն, քանի որ մեկի հաղթանակը գույքային առավելություն է տալու իրեն ի վնաս մյուսի:

Աշլի Վանիկ Մինասի շահերը թիվ ԵԱՆԴ/2548/02/08 քաղաքացիական գործով ներկայացրել է փաստաբան Արամազդ Կիվիրյանը:

Փաստաբան Արամազդ Կիվիրյանը իրավաբանական օգնություն է տրամադրել Արմինե Պողոսյանին (թիվ ԵԱՆԴ/1890/02/13 քաղաքացիական գործով), որը հանդիսանում է Աշլի Վանիկ Մինասի հակառակորդ կողմը:

Հետևաբար, Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արամազդ Կիվիրյանի նախկին վստահորդ Աշլի Մինասի շահերը հակասում են փաստաբան Արամազդ Կիվիրյանի վստահորդ Արմինե Պողոսյանի շահերին:

դ. Արդյո՞ք առկա է նախորդ վստահորդի համաձայնությունը, որ Պատասխանողն իրավաբանական օգնություն տրամադրի նրա հետ հակադիր շահեր ունեցող անձանց.

Կարգի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *ապացույցներ են կողմի բացատրությունը, վկայի ցուցմունքը, փորձագետիցուցմունքը, գրավոր փաստաթղթերը, իրեղեն ապացույցները (այդ թվում՝ լուսանկարները), ինչպես նաև ձայնագրություններն ու տեսագրությունները:*

Նույն կարգի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *գրավոր փաստաթղթեր են հանդիսանում գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկություններ պարունակող ակտերը, պայմանագրերը, տեղեկանքները, գործարար թղթակցությունը, այլ փաստաթղթերը և նյութերը, այդ թվում՝ էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով կամ փաստաթղթերի իսկությունը հաստատելու հնարավորություն ընձեռող այլ եղանակով ստացված ապացույցները:*

Այս կանոններից հետևում է, որ ապացույց է համարվում փաստաթուղթը, իսկ տվյալ դեպքում պայմանագիրը և ոչ թե՛ պայմանագրի պատճենը:

Գործնականում, Պալատի խորհուրդն ապացույց է համարել նաև փաստաթղթի պատճենը, եթե որևէ կողմ կասկածի տակ չի դրել դրա իսկությունը:

Տվյալ դեպքում, դիմող կողմը կասկածի տակ է դրել Պայմանագրի իսկությունը, իսկ Խորհուրդն էլ պահանջել է բնօրինակը Արամազդ Կիվիրյանից, որը սակայն չի ներկայացվել:

Դիմող կողմի առարկության պարագայում, փաստաբան Արամազդ Կիվիրյանի կողմից ներկայացված նոտարական կարգով վավերացված պատճենը Պալատի խորհուրդը չի համարում որպես Կարգի 17-րդ հոդվածից բխող գրավոր ապացույց, քանի որ նույնիսկ նոտարի կողմից պատճենի վավերացման գործողությունը չի կարող ապահովել փաստաթղթի վրա ստորագրության նմանակումը կամ այլ անձի փոխարեն ստորագրելը: Պալատի խորհուրդը փորձաքննություն նշանակելու նպատակով պահանջել էր այդ պայմանագրի բնօրինակը, որը սակայն չի ներկայացվել:

Բացի դա, նույնիսկ Պայմանագիրը, որպես ապացույց ընդունելու դեպքում, այն չի կարող հանդիսանալ կարգապահական վարույթի կարճման հիմք, հետևյալ

պատճառաբանությամբ.

Պայմանագրի 1.4.5 ենթակետի համաձայն՝ *կատարողն իրավունք ունի ներկայացնելու այլ անձանց շահերը որևէ գործում (գործերում), թեկուզ այդ անձանց շահերը հետագայում հակասեն Պարվիրատուի շահերին (սույն կետում նշված դրույթը հանդիսանում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով Պարվիրատուի կողմից տրված գրավոր համաձայնություն):* Պայմանագրի նախաբանից հետևում է, որ Կատարողը հանդիսանում է «Արես» փաստաբանական գրասենյակ» ՍՊ ընկերությունը և ոչ թե՛ Արամազդ Կիվիրյանը: Պայմանագրի 1.4.5 ենթակետում խոսքը գնում է կատարող կազմակերպության մասին և ոչ թե՛ փաստաբանների:

Պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև դիմողի ներկայացուցչի այն փաստարկը, որ մեկ այլ դատական գործընթացի ժամանակ, երբ վիճարկվել է Արամազդ Կիվիրյանի՝ Արմինե Պողոսյանին իրավաբանական օգնություն ցույց տալու իրավաչափությունը «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված հիմքով, վերջինս Պայմանագիրը չի ներկայացրել դատարանին: Բացի այդ, Պայմանագիրը թվագրված է 08.11.2011թ., մինչդեռ թիվ ԵԱՆԴ/2548/02/08 քաղաքացիական գործով առաջին ատյանի դատարանը վճիռը օրինական ուժի մեջ է մտել 25.03.2011թվականին: Պայմանագրի մեջ չկա դրույթ մինչև պայմանագիրը կնքելը ծագած հարաբերությունների վրա տարածվելու վերաբերյալ:

Այս պարագայում, խորհուրդը չի կարող Պայմանագրի պատճենը ընդունել որպես ապացույց, երբ՝

- դիմողը պնդում է, որ Պայմանագիր չի ստորագրել,
- Պայմանագիրը թվագրված է 08.11.2011թ., մինչդեռ դրա կարգավորման առարկան՝ ստորագրումից մոտ 8 ամիս առաջ ավարտված գործընթացն էր.
- փաստաբան Արամազդ Կիվիրյանը չի ներկայացնում Պայմանագրի բնօրինակը և որևէ փաստարկ չի բերում բնօրինակը չներկայացնելու պատճառների մասին:

Ե. Արդյո՞ք սույն գործով առկա է նախորդ վստահորդի կողմից վստահված գաղտնիքի բացահայտման վտանգ և արդյո՞ք սույն գործում այն տեղեկատվությունը, որին տիրապետում է Պատասխանողը նախորդ վստահորդի վերաբերյալ, կարող է անբարեխիղճ արտոնություններ ստեղծել նոր վստահորդի համար:

Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն *Փաստաբանական գաղտնիք են համարվում այն տեղեկությունները և ապացույցները, որոնք իրավաբանական օգնություն հայցող անձը փոխանցել է փաստաբանին, փաստաբանի տրված խորհրդատվության բովանդակությունն ու բնույթը, ինչպես նաև այն տեղեկությունները և ապացույցները (նյութերը, կրիչները), որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն:*

Գաղտնիությունը փաստաբանի գործունեության էությունն է, այսինքն՝ վստահորդը փաստաբանին հայտնում է այնպիսի տեղեկություններ, որոնք նա չի փոխանցի ուրիշների, և փաստաբանը պետք է այդ տեղեկատվության տիրապետողը լինի գաղտնիության հիմքի վրա: Հետևաբար՝ գաղտնիության պահպանումը փաստաբանի առաջնային պարտականությունն է: Փաստաբանի պարտականությունը գաղտնիության պահպանման վերաբերյալ ծառայում է արդարադատության արդյուավետ իրականացմանը և վստահորդի շահերին: Փաստաբանը պետք է պահպանի այն ամբողջ տեղեկատվության գաղտնիությունը, որի մասին նա տեղեկանում է իր մասնագիտական գործունեության ընթացքում:

Կանոնագրքով նախատեսված սահմանափակումն ուղղված է շահերի բախման դեպքում իրավաբանական օգնության արգելքին, ինչն իր հերթին կոչված է երաշխավորելու փաստաբանի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ լիակատար անկախությունը՝ այդ թվում տարբեր շահերից, որոնք կարող են ազդել վերջինիս կողմից անձին իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ անկախ և բարեխիղճ լինելու վրա՝ ապահովելով վստահորդի շահերի արդյունավետ պաշտպանությունը, ինչպես նաև չվնասելով նախկին վստահորդին:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ նախկին վստահորդի համաձայնությունը փաստաբանին տրված լինելու դեպքում, Կանոնագրքի 3.2.8 ենթակետի վրա այն չի կարող տարածվել:

Կանոնագրքի 3.2.8 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պետք է հրաժարվի նոր վստահորդի օգտին գործել, եթե առկա է նախորդ վստահորդի կողմից վստահված գաղտնիքի բացահայտման վրանգ, կամ եթե այն տեղեկատվությունը, որին տիրապետում է փաստաբանը նախորդ վստահորդի վերաբերյալ, կարող է անբարեխիղճ արտոնություն ստեղծել նոր վստահորդի համար:*

Սույն կարգապահական գործով հաստատվել է այն հանգամանքը, որ փաստաբան Արամազդ Կիվիրյանը ԵԱՆԴ/1890/02/13 քաղաքացիական գործով ներկայացրել է նոր վստահորդի շահերն ընդդեմ նախկին վստահորդի, և երկու քաղաքացիական գործերով վեճերի առարկան համընկնում է: Տվյալ պայմաններում փաստաբանի ստացած տեղեկատվությունը ակնհայտ է, որ պարունակում է տվյալներ վեճի առարկայի մասին, որոնք Աշլի Մինասը որպես վստահորդ կարող էր հայտնել իր փաստաբանին վստահ լինելով, որ պահպանվելու է դրանց գաղտնիությունը: Դրանով իսկ ստեղծվում է անբարեխիղճ արտոնություն նոր վստահորդի համար, ինչը Խորհրդի կողմից գնահատվում է, որպես կոպիտ խախտում:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ վստահորդների շահերի հակասության դեպքում, փաստաբանի նմանատիպ վարքագիծը վարկաբեկում է փաստաբանի կոչումն ու հեղինակությունը և հասարակության մոտ փաստաբանի դերի և նշանակության վերաբերյալ բացասական կարծիք է ձևավորում:

Ամփոփելով վերոգրյալը Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արամազդ Կիվիրյանն ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, Կանոնագրքի 3.2.5 և 3.2.8 ենթակետերի խախտման համար:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը, ինչպես նաև փաստաբան Արամազդ Կիվիրյանի անձը բնութագրող հանգամանքները:

Նախկինում նմանատիպ արարքի³ համար փաստաբան Ռոմեն Ահարոնյանը Պալատի Խորհրդի⁴ 27.08.2012թ. թիվ 25 նիստի թիվ 21/1-Ա որոշմամբ ճանաչվել է

³ Ռոմեն Ահարոնյանը որպես «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ ներկայացուցիչ պաշտպանել է վերջինիս շահերը ընդդեմ «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ աշխատակիցների, իսկ փաստաբան դառնալուց հետո իրավաբանական օգնություն է ցույց տվել «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ նախկին աշխատակիցներին:

⁴ Խորհուրդը գործը քննել է հետևյալ կազմով՝ նիստը նախագահող փաստաբան Գևորգ Գյոզալյան, անդամներ՝ Արա Զոհրաբյան, Մելանյա Առուստամյան, Սիմոն Բաբայան, Հայկ Ալունյան, Լուսինե Սահակյան, Հայաստան Ստեփանյան և Կարինե Խաչատրյան:

մեղավոր Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և Կանոնագրքի 3.2.8-րդ հոդվածի պահանջների խախտման համար, և վերջինիս նկատմամբ նշանակվել է տույժ՝ տուգանք 200.000 ՀՀ դրամի չափով և լրացուցիչ տույժ՝ իր հաշվին, վեց ամսվա ընթացքում տասներկու ժամ, մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների՝ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հիմնախնդիրները» թեմայով:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների

4) տուգանք (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի խորհուրդը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տուգանքի չափը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը, որը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը: Տուգանքը փաստաբանը վճարում է փաստաբանների պալատի բյուջե:

Վերոգրյալից ելնելով՝ խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «տուգանք» կարգապահական տույժի տեսակը՝ 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով, միաժամանակ սահմանելով լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով 8 ակադեմիական ժամ ժամաքանակով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի, 2-րդ և 3-րդ մասերի, ՀՀ Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արամազդ Կիվիրյանին (արտոնագիր թիվ 800) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.2.5 և 3.2.8 ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Արամազդ Կիվիրյանի (արտոնագիր թիվ 800) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք 150.000 ՀՀ դրամ և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ

**վերապարաստման դասընթացներին մասնակցություն Դեռնթուլոգիա թեմայով, 8
ակադեմիական ժամ ժամաքանակով:**

**3. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել
կողմերին:**

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն
ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է
մտնում բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Կարեն Մեծլումյան